Digitally signed by GHAZARYAN HOVHANNES 1404750070
Date: 2023.12.21 15:35:05 AMT

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/43544/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հայցադիմումը վարույթ ընդունելու, գործը դատական նիստում քննելու մասին
միջնորդությունը մերժելու և գործը գրավոր ընթացակարգով քննելու մասին

20 դեկտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Հովհաննես Ղազարյանի, ծանոթանալով «Թեոֆարմա Իմպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/56» ծածկագրով գնման ընթացակարգը 22-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին 01.12.2023 թվականի հայտարարությունն անվավեր ճանաչելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումին և կից փաստաթղթերին, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը, ինչպես նաև հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ գործը դատական նիստում քննելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

13.12.2023 թվականին Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում (այսուհետ՝ նաև Դատարան) մուտքագրվել է «Թեոֆարմա Իմպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ նաև Հայցվոր) անունից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատասխանող)՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/56» ծածկագրով գնման ընթացակարգը 22-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին 01.12.2023 թվականի հայտարարությունն անվավեր ճանաչելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջներով:

Դատավորի աշխատակազմին գործը հանձնվել է 15.12.2023 թվականին:

Դատարանը փաստում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 3.1-րդ մասով և 27.2 գլխով սահմանված կանոնների պահպանմամբ:

Հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերը բացակայում են, Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նշված իրավանորմի տրամաբանությամբ՝ եթե դատարանն իր նախաձեռնությամբ չի եկել եզրահանգման առ այն, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում, ապա նման եզրահանգման կարող է գալ նաև գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա: Այլ կերպ՝ անկախ միջնորդության առկայությունից կամ բացակայությունից, դատարանը պետք է հանգի հետևության առ այն, որ առկա է գործը դատական նիստում, կամ որ նույնն է՝ բանավոր ընթացակարգով, քննելու անհրաժեշտություն:

Սույն դեպքում Հայցվորի ներկայացուցիչը միջնորդել է գործը քննել դատական նիստում՝ պատճառաբանությամբ, թե վիճարկվող հայտարարությունը որևէ փաստական հիմնավորում չի պարունակում, ուստի Հայցվորը զրկված է հայտարարության պատճառներն ընկալելու հնարավորությունից: Պատճառաբանությամբ, թե Պատասխանողի գործողությունները չեն համապատասխանում օբյեկտիվ իրականությանը, ինչի արդյունքում ստեղծվում է տպավորություն, որ դրանք թյուրիմացության հետևանք են, Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, թե վիճարկվող հայտարարության հիմքերը պարզելու, Պատասխանողի գործողությունների օրինականության մասին առարկայական քննարկում կատարելու, վերլուծություն ներկայացնելու համար անհրաժեշտ է հրավիրել դատական նիստ: Բացի այդ, մատնանշելով այն հանգամանքը, որ կայացվելիք դատական ակտի հնարավոր բողոքարկումների դեպքում վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում բողոքների քննության համար ևս սահմանված է գրավոր ընթացակարգ, Հայցվորն անհրաժեշտ է համարում, որպեսզի իր լսված լինելու իրավունքն իրացվի առաջին ատյանի դատարանում:

Քննարկելով գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությունը՝ Դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությունը չի պարունակում ո՛չ հիմնավորումներ՝ գործի առանձնահատկությունների վերաբերյալ, ո՛չ որևէ հիմնավորում առ այն, որ լրացուցիչ փաստարկները կամ պարզաբանումները Հայցվորի ներկայացուցիչը հնարավորություն չի ունեցել կամ չունի ներկայացնելու դատական նիստից դուրս՝ գրավոր կերպով:

Ինչ վերաբերում է Հայցվորի ներկայացուցչի կողմից բարձրացված հարցերին, Դատարանը փաստում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով

նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Բերված իրավանորմերի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունն օրենքով սահմանված ժամկետում չկատարելու դեպքում պատասխանողն է կրելու այդ պարտականությունը չկատարելու բացասական հետևանքները:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ գործը դատական նիստում քննելու անհրաժեշտություն հայցադիմումը վարույթ ընդունելու օրվա դրությամբ առկա չէ:

Դատարանը փաստում է, որ գործին մասնակցող անձինք զրկված չեն դատավարական ժամկետների պահպանմամբ և համապատասխան հիմնավորումներով՝ գործը դատական նիստում քննելու մասին այլ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից:

Այսպիսով, հաշվի առնելով այն, որ հայցադիմումը վարույթ ընդունելու պահի դրությամբ օրենքով սահմանված բացառություններ առկա չեն, Դատարանը գտնում է, որ գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: (…):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, նույն օրենսգրքի 27.2 գլխի կանոններով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1/. «Թեոֆարմա Իմպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/56» ծածկագրով գնման ընթացակարգը 22-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին 01.12.2023 թվականի հայտարարությունն անվավեր ճանաչելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել Դատարանի վարույթ:

2/. Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ գործը դատական նիստում քննելու մասին, մերժել. գործը քննել գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու:

3/. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի փետրվարի 02-ին «DataLex» դատական տեղեկատվական համակարգի միջոցով (պաշտոնական կայքը՝ datalex.am):

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ։

ԴԱՏԱՎՈՐ՝ Հովհաննես Ղազարյան